

Երևանի քաղաքապետարանը հայտարարում է Երևանի
Հանրապետության հրապարակի վերակառուցման հայեցակարգային
նախագծի հանրապետական ճարտարապետական բաց մրցույթ՝

Մրցույթի նպատակը՝

Ընտրել այն լավագույն նախագծային առաջարկությունները, որոնք ուղղված կլինեն Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանի Հանրապետության հրապարակի կարևորագույն ճարտարապետական համալիրի արդիականացմանն ու հարմարեցմանը քաղաքաշինական զարգացման արդի գործընթացներին, մասնավորապես հաշվի առնելով հետևյալ իրողությունները.

- հրապարակն իրականում վերածվել է տրանսպորտային գերբեռնված հանգույցի, իր բոլոր բացասական ազդեցություններով,

- Հանրապետության հրապարակին անմիջականորեն հարող տարածքների կառուցապատման արդյունքում ակտիվ սիլուետներ են ձևավորվել հրապարակի շուրջ, էականորեն աղճատելով համալիրի մասշտաբայնության և դոմինանտության կարևոր պայմանները,

- *հրապարակը ձևավորող որոշ մասնաշենքեր գործառնական նշանակությամբ վերափոխվել են*

- կառուցվել է երկու կարևորագույն հրապարակների միջև հետիոտն կապ հանդիսացող Հյուսիսային պողոտան,

- ի վերջո՝ Հանրապետության հրապարակը, հանդիսանալով համայն հայության խորհրդանիշ ու համազգային, համապետական և համաքաղաքային միջոցառումների իրականացման կարևորագույն հարթակ, Լենինի արձանի և դրա տրիբունայի ապամոնտաժման արդյունքում, ունի որոշակի դժվարություններ, զանազան հանդիսությունների կազմակերպման խնդրում:

Մրցույթի արդյունքների քննարկման ընթացքում առանձնակի ուշադրության կարժանանան հատկապես այն առաջարկությունները, որոնք հիմնավորված կլինեն մայրաքաղաքի կենտրոնի քաղաքաշինական առկա իրադրության համակողմանի վերլուծությամբ և այդ համատեքստում առավել հիմնավոր լուծումներ կառաջադրեն հրապարակի և հարող տարածքների վերակառուցման, ծավալատարածական հորինվածքների զարգացման և ներդաշնակման, ճարտարապետական միասնականության ապահովման խնդիրներում:

Ցանկալի է, որպեսզի մասնակիցների կողմից ներկայացվող առաջարկությունները լինեն հնարավորինս իրատեսական, ներառելով վերը նշված պայմաններն ու քաղաքաշինական այն հիմնախնդիրները, որոնք ակնառու են և ունեն անհետաձգելի լուծման անհրաժեշտություն:

Մրցույթին մասնակցության պայմանները՝

Մրցույթին կարող են մասնակցել՝ Հայաստանում գործող անհատ ճարտարապետներ, ճարտարապետներից և հարակից մասնագետներից կազմված ստեղծագործական խմբեր և ճարտարապետական ստեղծագործական արվեստանոցներ:

Հայեցակարգային նախագծերի իրականացման համար նախատեսվում է նաև ուղղակի պայմանագրեր կնքել այն ճարտարապետական արվեստանոցների հետ, որոնք ունեն քաղաքային համալիրների և կարևորագույն կառույցների նախագծման իրական փորձ, ինչը հնարավորություն կտա ոչ միայն որոշակիորեն ձևավորելու մրցույթի մասնակցային կազմը, այլև իրական երաշխիքներ ստեղծել՝ լուրջ արդյունքներ ակնկալելու խնդրում:

Մրցութային նախագծերի ներկայացման ձևաչափը՝

Մրցութային նախագծերը ներկայացվում են համառոտ բացատրագրով և գրաֆիկական մասով: Գրաֆիկական մասը ներկայացվում է ազատ, այն անհրաժեշտ ծավալով, ինչը լիարժեք բացահայտում է հայեցակարգի հիմքում դրված մտահղացումները, ներառելով՝ գլխավոր հատակագիծը, ճակատների փովածքները, կտրվածքները, անհրաժեշտության դեպքում՝ առանձին դրվագները, եռաչափ գծապատկերները և այլն:

Պայմանագրային հիմունքներով մրցույթին մասնակցող ստեղծագործական արվեստանոցները պարտադիր կարգով նախագծային առաջարկությունը ներկայացնում են նաև մանրակերտով՝ 1:400 մասշտաբով:

Մրցույթի անցկացման և նախագծերի ներկայացման ժամկետները՝

Մրցութային աշխատանքների սկիզբը սահմանվում է 2013 թվականի մայիսի 29-ը, իսկ ավարտը՝ 2013 թվականի օգոստոսի 29-ը:

Մրցութային առաջարկությունները ներկայացվում են ոչ ուշ, քան 2013 թվականի օգոստոսի 29-ը, մինչև ժամը 17.00-ն, հետևյալ հասցեով՝ Երևան, Հանրապետության հր. Կառավարության տուն 3, առաջին հարկ – ճարտարապետության թանգարան, հեռ.՝ 52 96 30 :

Մրցույթի մասնակցի մրցութային նախագծի հանձնումը վավերացվում է կնքված տեղեկանքով:

Մրցույթի համար անհրաժեշտ ելակետային նյութերը՝

Մրցույթի համար անհրաժեշտ ելակետային նյութերը մասնակցները կարող են ձեռք բերել այցելելով Երևանի քաղաքապետարանի [www. Yerevan.am](http://www.Yerevan.am) պաշտոնական կայք:

Լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել՝ 094 79-30-90 հեռախոսահամարով:

Մրցույթի արդյունքների ամփոփումը և մրցանակային ֆոնդը՝

Մրցութային նախագծերի քննարկումն ու արժևորումը իրականացնում է մրցութային հանձնաժողովը, հետևյալ կազմով.

<i>Մրցութային հանձնաժողովի նախագահ</i>	<i>Նարեկ Սարգսյան</i>	<i>Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետ, ՀՀ վաստակավոր ճարտարապետ</i>
<i>Մրցութային հանձնաժողովի անդամներ</i>	<i>Ռուզան Ալավերդյան</i>	<i>ՀՀ քաղաքաշինության փոխնախարար</i>
	<i>Արև Սամուելյան</i>	<i>ՀՀ մշակույթի փոխնախարար</i>
	<i>Հրաչ Պողոսյան</i>	<i>Երևանի քաղաքապետարանի ճարտարապետության հանձնաժողովի նախագահ, ՀՀ վաստակավոր ճարտարապետ</i>
	<i>Մկրտիչ Մինասյան</i>	<i>Հայաստանի ճարտարապետների միության նախագահ, ՀՀ վաստակավոր ճարտարապետ</i>
	<i>Գուրգեն Մուշեղյան</i>	<i>ՀՀ վաստակավոր ճարտարապետ</i>
	<i>Սաշուր Քալաշյան</i>	<i>ՀՀ վաստակավոր ճարտարապետ</i>
	<i>Յուրի Սաֆարյան</i>	<i>ԵՃՇՊՀ պրոռեկտոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ</i>
	<i>Արթուր Մեսչյան</i>	<i>Ճարտարապետ</i>
<i>Հանձնաժողովի քարտուղար</i>	<i>Աշոտ Հակոբյան</i>	<i>Ճարտարապետ</i>

Մրցութային հանձնաժողովի նախագահը և անդամները, ինչպես նաև անձինք, ովքեր մրցույթը հայտարարողի կողմից նշանակված են այն նախապատրաստելու ու կազմակերպելու կամ փորձագիտական եզրակացություն կազմելու համար, իրավունք չունեն մասնակցելու մրցութին կամ խորհրդատվական ծառայություն մատուցելու մասնակիցներից որևէ մեկին:

Մրցութային հանձնաժողովն իր որոշումները կայացնում է փակ գաղտնի քվեարկությամբ, անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

Մրցութային հանձնաժողովի կողմից մրցույթի արդյունքների ամփոփումն իրականացվում է մրցութային աշխատանքների շուրջ կազմակերպված հասարակական իրազեկումից հետո, բայց ոչ ուշ, քան 2013 թվականի օգոստոս ամսվա վերջը:

Մրցույթի արդյունքներով ընտրված երեք լավագույն աշխատանքները կպարգևատրվեն 1-ին, 2-րդ և 3-րդ մրցանակներով, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 1մլն դրամական պարգևով:

Մրցութային հանձնաժողովի որոշմամբ ուշադրության արժանացած ևս երեք աշխատանքներ կարող են ստանալ խրախուսական մրցանակներ, յուրաքանչյուրը՝ 500 հազ. դրամական պարգևով:

Ծանոթություն՝

Մրցութային փաստաթղթերը ներկայացվում են վեցանիշ թվային ծածկագրով: Այն տեղադրվում է գծագրերի վերին աջ անկյունում և պետք է ունենա 15մմ բարձրություն:

Աշխատանքները ներկայացվում են համապատասխան ծածկագիր ունեցող կից փակ ծրարով, որի ներդիրում նշվում է մրցութային նախագծի հեղինակային կազմը և վերջիններիս միջև դրամական բաշխումը:

29.05.2013թ